



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

թիւ 22 .

ՊԼԵՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱԲԱԿՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԲԱԲԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ԸՆԳՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1870 ՍՄԻՆ

ՆԻՍ ԲԱՆՆԵՐԿՈՒՆԵՐՈՐԳ

25 ԱՊՐԷ 1874



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏԳԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԻՒՀԷՆՏԻՍԵԱՆ

— 1874 —

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ԲԱՅՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ԻՖ.

23 ԱՊՐԵԼ 1871.

ՆԱԽԱԳԱՀ. — ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԲ

ԱՏԵՆԱՊԵՏ. — Կ. ԳԱՐՍԿԷՕԶԵԱՆ ԷՖԷՆՏԻ

ԿԱՐԳ ԽՆԴՐՈՅ

- 1. Ընդունելութիւն ատենադրութեան նախընթաց նիստին:
- 2. Ատենական կանոնադրութիւն:
- 3. Վերաքննութիւն Սանճանադրութեան:

Ատենի բացման որոշեալ ժամն անցած բայց երեք Ատենապետ էֆէնտիներէն եւ ոչ մէկն եկած ըլլալով, իբր երիցագոյն Նկիտպաշեան Ասափա էֆ. ին կ'առաջարկվի առ ժամանակեայ կերպով ատենապետութեան աթոռն անցնիլ, բայց նա հրաժեշտ կու տայ պատճառելով թէ նախընթաց երկու նիստերէն բացակայ գտնվելուն համար օրուան ինդրոց պարագաներէն անտեղեակ էր. ուստի Ղազարոսեան Գ. էֆ. կը հրաւիրվի առ ժամանակեայ ատենապետութիւն ընելու, որ Ատենը կը բանայ 'ի ներկայութեան 49 երեսփոխանաց, որոց թիւը հետզհետէ աւելնալով 64 ի հասաւ:

Ատենապետ էֆ. օրուան կարգին ձեռնարկելով նախընթաց նիստի ատենադրութեան վրայ ի դիտողութիւն կը հրաւիրէ զերեսփոխանները:

1. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՆԱԽԸՆԹԱՅ ՆԻՍՏԻՆ

ԵՌԻՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՖ. — Տեարք իմ, Ընդհանուր ժողովոյ մէջ ամեն երեսփոխան ազատ է խօսիլ եւ իր կարծիքն համարձակագէտ յայտնել: Նախորդ նիստին մէջ կատարված քրէ-

արկութեան միջոցին իմ քրէն անտարբերութեան քրէ էր. իմ կարծիքս յայտնապէս ըսեմ, թէ եւ առաւել հակամէտ էի սրբազրեալ ծրագրին վրայ վերաքննութիւնն ընելու քան թէ գործադրութեան մէջ գտնված Սանճանադրութեան, բայց առաւել եւս կը փափաքէի որ վերաքննութեան եղանակը վճարար որոշվի միանգամ եւ գործը յառաջ կրթայ. ուստի ոչ մէկ եւ ոչ միւս կողմին քրէ տալով չեղոք կեցայ. սակայն կը տեսնեմ որ նախորդ նիստի ատենադրութեան մէջ Ատենադպիր էֆ. քրէ-արկութեան արդիւնքն իբրեւ որոշում մէջ բերելէ ետեւ՝ անմիջապէս այնպիսի պարբերութիւն մը յաւելցուցած է, որուն եւ ոչ մէկ բացարձակապէս փոխանված է ժողովոյն մէջ ահա՛ այս պարբերութիւնը. « կէտ մը որ շատ « տարիներէ 'ի վեր արդէն որոշված եւ ժողով « վին անցեալ տարուց բացումէն անտի խնդրոց « կարգին մէջ իսկ անընդհատ կը տիրէ »:

Ար զարմանամ եւ դիտել կու տամ ժողովոյն թէ ինչպէս երեսփոխանաց չ'ըսած ու չ'արտասանած մէկ խօսքը անցեր է ատենադրութեան մէջ:

ԱՅԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ընդհանուր դիտողութիւնները պէտք է ետքի մնան, եւ նախ ձեր մասնաւոր դիտողութիւններն եթէ ունիք, յառաջ բերէք:

ԵՆՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՖ. — Ընդհանուր ժողովոյ պատուոյն դէմ եղած իրողութեան մը համար բողոք մ'էր իմ ըսածս, եւ այս բողոքս ընելէ ետեւ ահա կը նստիմ:

ՊԵՎԵԱՆ Թ. ԷՖ. — 310 րդ. երեսի առաջին սիւնակին մէջ « Փափագեան, Իփէկճեան, Պէկեան եւ Ալաճաճեան էֆ. ներք ընթերցումը չը լսելու համար ժողովարանէն դուրս կ'ելնեն » գրված է: Մեր դուրս ելնելուն պատճառը Ատենապետ էֆ. ին առանց ժողովոյն որոշման գիտելու ատենագրութեան ընթերցմանն սկսելուն էր, վասն զի (ես իմ մասին խօսելով) եթէ ժողովը որոշելու ըլլար, կը պարտաւորէի ընթերցումը մտիկ ընել:

Տ. ԱՄԲՐՈՍԻՈՍ ՎՐ. — Ատենագրութեան վերջին 313րդ. երեսին երկրորդ սիւնակին մէջ զարմանօք կը դիտեմ որ քուէարկութեան սկսված միջոցին երբ գիւճանագրուիք զաղբած էին արձանագրելէ, ըստ որում վիճարանութիւնը վերջացած եւ արձանագրութեան նիւթ մը չ'էր մնացած այն միջոցին, իմ եւ Ռուսինեան էֆ. ի մէջ եղած մասնաւոր խօսակցութիւն մը հրապարակ հանված է. Ռուսինեան էֆ. « կ'ամաչեմ քուէ տալու » ըսաւ. ես ալ մասնաւոր կերպով եւ ոչ ի պաշտօնէ պատասխանեցի, « այսքան քուէարկուաց մէջ մէկ ամաչօղ մը պէտք է »: Այս խօսքիս ետեւէն անմիջապէս կը յարէ ատենագրութիւնը Ռուսինեան էֆ. ի բերնէն թէ « այսքան չ'ամաչօղաց մէջ մէկ ամաչօղ իրիստ շատ է եւ աւելորդ իսկ »:

Ես չ'եմ յիշեր որ այս վերջին խօսքը Ռուսինեան էֆ. ըսած ըլլայ այն միջոցին, եւ կարծեմ ինծի պէս եւ ոչ մէկը լսած է այդպիսի խօսք մը: Եւ սակայն խնդրէ դուրս եղած այդ մասնաւոր խօսքերուն արձանագրութիւնը ժողովոյն երբէք պատիւ չը բերէր, որք թէ եւ ըսված ալ ըլլան արժանի չ'էին արձանագրվելու: Ռուսինեան էֆ. իր ամաչօղ ըլլալը կամ չ'ըլլալը իր գործող մէջ պէտք է մնտաէ եւ ոչ ուրիշ տեղ:

Ատենապետ էֆ. նորէն կը յիշեցնէ որ մասնաւոր դիտողութեանց կարգէ չը հեռացվի առ այժմ:

ՊԵՎԵԱՆ Թ. ԷՖ. — Այս եւ ասոր նման ուրիշ դիտողութիւններ ես ալ պիտի ընէի, բայց

ըստ որում Ատենապետ էֆ. աղղարարեց որ ընդհանուր դիտողութիւններն ետքի մնան, հետեւապէս վերապահեցի զանոնք որ երբ կարգը դայ նորէն խօսք առնում իմ դիտողութիւններս յայտնելու:

Ա. ԱՃԱՃԵԱՆ Զ. ԷՖ. — 309րդ. երեսի երկրորդ սիւնակին մէջ գրված է թէ՛ Խօճասարեան էֆ. ի հետ իբր թէ ես բողոքած եմ Իփէկճեան էֆ. ի խօսելուն դէմ. սխալ է, ընդհակառակն ես ոչ Իփէկճեան էֆ. ի, այլ Խօճասարեան էֆ. ի խօսելուն դէմ բողոքեցի, եւ ուղեցի որ առաջինն իր խօսքը շարունակէ:

ԻՓԷԿՃԵԱՆ Զ. ԷՖ. — Այս անգամ դարձեալ հիմայ կ'ըստանամ նախորդ նիստի ատենագրութիւնը, չը գիտեմ թէ այս պատահմունքը միայն ի՞նչ համար է որ միշտ ատենագրութիւնք ուչ կը հասնին իմ ձեռքս եւ հապճեպ տաղնապաւ կը պարտաւորիմ զանոնք հոս կարդալու: Այնպիսի կէտեր կը նշմարեմ այս անգամի ատենագրութեան մէջ, որոնց վրայ ինչպէս ես նոյնպէս ամեն ոք իրաւունք ունի դիտողութիւններ ընելու: Ես կը բողոքեմ Ատենապետ էֆ. ին ասկից առաջ յայտնած այն կարծեաց դէմ թէ երեսփոխանք մի միայն իրենց խօսից վրայ դիտողութիւն ընելու սահման ունենան: Ես անբռնարարելի իրաւունք ունենալ կը կարծեմ ուրիշի խօսածն ալ քննելու: Եթէ այսպէս չ'ըլլայ ատենագրութիւնք չ'իմծու եղած կ'ըլլան: Կը տեսնեմ որ Ռուսինեան էֆ. նախ իր չ'ըսած մէկ խօսքն արձանագրելէ, ...

Ատենապետ էֆ. ընդմիջեց Իփէկճեան էֆ. ի խօսքը, եւ յիշեցնելով որ մասնաւոր դիտողութիւններն աւարտելէ ետեւ ընդհանուր դիտողութեանց համար ալ կարգաւ խօսք պիտի տայ ամենուն, հրաւիրեց զինքը որ նախ մասնաւոր դիտողութիւն եթէ ունի ընէ:

ԻՓԷԿՃԵԱՆ Զ. ԷՖ. — 309րդ. երեսին երկրորդ սիւնակին մէջ ըսածներս թերի արձանագրվեր են, ահաւասիկ ինչ որ ըսեր էի « Դիւանք բը- « նաւ իրաւունք չ'ունէր Ի. նիստի ատենագրութեան վաւերացումը առաջարկել ժողովին, վասն զի ըստ սովորութեան նախնիաց « նիստերու վաւերացման ներկայանալիք ատենագրութիւնը խնդրոյ կարգը անցած կ'ըլլար. համարձակ կ'ըսեմ թէ Դիւանն ինք ար- « տաքոյ կարգի խնդիր յարուցանելով պատ- « ճառ եղաւ անտեղի վիճարանութեանց եւ « ժամավաճառութեան. ուստի ընաւ իրաւունք

« պիտի օրէնք մը որով Ատենագրութիւն մը պարտութիւն ունենայ ուղած բացատրութիւնները իբրեւ ծանօթութիւն ատենագրութեանց « մէջ յաւելցնելու, թո՛ղ ցուցնէ մեզի, ահա « այս անգամ կրկին ատենագրութեան վերջը « այնպիսի ծանօթութիւն մը կը յաւելցընէ, « որ Ընդհանուր ժողովոյ իւր իրաւասութիւնն « է եւ որ երբէք այդ ծանօթութեան վրայ տեղե- « կութիւն չ'ունի. ի՞նչ իրաւասութիւն Ատենագրութիւն « էֆ. կը համարձակի Ընդհանուր ժողովոյն ինք- « նին որոշելիք մէկ խնդիրը յանուն Դիւանին « իւր ստորագրութեամբը յաւելցնել ատենագր- « ութեան մէջ. ուստի նորա դէմ կը բողոք- « քեմ այս մասին »: Ահա այսպէս պէտք է ար- « ձանագրվի սոյն բողոքս:

Մասնաւոր դիտողութեանց վերջանալէն ետեւ Ատենապետ էֆ. ընդհանուր դիտողութեան համար խօսք ուղղ իրաւասութեանց կարգաւ խօսք տալու միջոցին Խօճասարեան էֆ. հարցուց թէ ժողովը ընդհանուր դիտողութիւն ընել կ'ընդունի՞:

Ըստ որում մեծազոյն մաս գոյացած էր արդէն, Ատենապետ էֆ. ժողովոյ կամքին դիմեց, որոյ միաձայն հաւանութեամբը որոշվեցաւ անմիջապէս ընդհանուր դիտողութեանց սկսիլ:

ՊԵՎԵԱՆ Թ. ԷՖ. — Իմ ընելիք դիտողութիւններս խմբագրութեան վրայ չ'են, այլ այն մասերուն միայն կը վերաբերին որ կամ ընաւ տեղի ունեցած չ'են եւ կամ այլալուծեամբ արձանագրված:

ԵՆՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՖ. — Ես ընդհանուր դիտողութիւն ըսելով ուրիշ երեսփոխանաց խօսքերը դիտողութեան առնուլ չ'եմ հասկընար իւրաքանչիւր երեսփոխան իւր խօսքին ինքն է պատասխանատուն. այս սկզբան համեմատ ամենեւին մէկու մը ըրած խօսքը քննադատելու միտք չ'ունիմ. իմ ընելիք դիտողութիւնս պատուոյ դպչելիք կէտի մը վրայ է, որ ընաւ մէկ ատենախի մը մէջ չը կրնար ընդունվիլ. եթէ Ատենագրութիւն էֆ. իր կողմանէ եւ իր ստորագրութեան տակ յաւելցուցած ըլլար այդ կէտը, թերեւս կրնար արդարանալ, բայց այժմ իրաւունք չ'ունի: Այս դիտողութիւնս արդէն Ատենապետ էֆ. ին ալ ճաղորդեցի. ինքն ալ ինչ պէս իրաւունք չը տրվաւ եւ այն կէտին իւր ուշադրութենէն վրիպած ըլլալն ալ յայտնեց:

ՊԵՎԵԱՆ Թ. ԷՖ. — Ես ալ միեւնոյն դիտողութիւնք պիտի ընեմ. ատենագրութեան 313րդ. եւ

« չ'ունի այդ իր սպորինի կերպով յարուցած « խնդիրը չ'ընդունողներն ամբաստանել: Սրբա- « զան նախագահն ալ ի դուր խօսքեր բրա- « մեղի դէմ թէ ժամանակինս կը վասնենք. « ումանք ալ այս առթիւ վրէժխնդրութիւն ք- « նել ուղեցին իրենց հակառակորդաց: Ժա- « մանակ վասնօղը մենք չ'ենք, այլ Դիւանն « է որ արտաքոյ կարգի խնդիր յարուց եւ այն « երեսփոխան էֆէնայիներն են որ այդպիսի խն- « դիրները կը պաշտպանեն: Կը ցաւիմ շատ որ « ամեն անգամ ժամանակինս վասնել կը պար- « տաւորինք այնպիսի վիճարանութիւններով, « որոց պատճառը շատ անգամ Դիւանն ինք « կ'ըլլայ, եւ յետոյ կ'ընէ զուրիշները կ'ամ- « բաստանէ: »

Նոյն երես նոյն սիւնակին մէջ արձանագրված է թէ՛ մեր խօսած ատեն Խօճասարեան, Ալաճաճեան էֆ. ներն եւ այլք կը բողոքեն, եւ թէ մենք ալ անոնց պատասխանելու առթիւ շարունակ կը խօսինք: Անաւասիկ բուն եղելութիւնը որ Դիւանին արձանագրածէն բոլորովն ասարեք է: — Ես Դիւանէն օրինաւոր կերպով խօսք առնելով կը խօսէի, Խօճասարեան էֆ. աղմուկ բարձրացընելով կ'ուղէր խօսքս խափանել. Դիւանն ալ փոխանակ ըզբօճասարեան էֆ. ի կարգ հրաւիրելու անտարբեր կեցեր հանդիսատես կ'ըլլար. թէ եւ Ատենապետ էֆ. ինք Ի. նիստին մէջ ըսած էր թէ՛ « երեսփոխան մը խօսած ատեն եթէ զայն չ'իտիճելու չափ ձայներ բարձրանան, լուսթիւնը վերահաստատուել իմ պարաքս է »: Երեք անգամ խնդրեցի Դիւանէն որ լսեցնէ ըզբօճասարեան էֆ. նոյն միջոցին Ալաճաճեան էֆ. եւ այլք ձայնակցեցան ինձ եւ Խօճասարեան էֆ. ի բըռնած սպորինի ընթացքին դէմ բողոքեցին. ինչպէս որ Ալաճաճեան էֆ. ինքն ալ վկայեց այժմ. ուր ուրեմն Դիւանը աղղարարութիւն ըրաւ Խօճասարեան էֆ. ին եւ ի կարգ հրաւիրեց զանի: Մեր խօսքը բռնարարված միջոցին շարունակ խօսածնիս ուրիշ բան չ'էր, բայց եթէ բողոք թէ՛ Դիւանին եւ թէ՛ Խօճասարեան էֆ. ին բռնած սպորինի ընթացից դէմ:

ԱՅԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Իւր մասնաւոր դիտողութիւնը նախնիաց ձեռքի տրուածութեան վրայ). 311րդ. երեսի երկրորդ սիւնակին մէջ իմ խօսքերս թերի գրված են. ես չըսի թէ « Ատենագրութիւն էֆ. իրաւունք ունենալը յայտնեց », այլ բոլոր թէ՛ իմ խօսքիս ի պատասխան Ատենագրութիւն էֆ. թէ եւ իրաւունք կրնայ ունենալ ըսաւ, բայց ես չ'ընդունվիլ ըսի եւ յաւելցուցի. « եթէ կայ այդ-

րեսին մէջ վերաքննութեան խնդիրը քրէտար-
կութեամբ որոշվելէ ետեւ ինչ գործ ունին սա-
հետեւեալ խօսքերը, « կէտ մը որ շատ տա-
« րիներէ ի վեր արդէն որոշված եւ ժողովին
« անցեալ տարւոյ բացումէն անտի խնդրոց
« կարգին մէջ իսկ անընդհատ կը տիրէ »:

Ժողովին մէջ երբէք չ'եղած դիտողութիւն մը
ի՞նչ հարկ կայ ատենագրութեան մէջ անցը-
նելու: — Գարձեալ ի՞նչ բան ունի ատենագրու-
թեան մէջ սա խօսքը թէ՛ « Այսքան չամաչօ-
« դաց մէջ մինակ մէկ ամաչօղ խիստ շատ է »:
Կուսակցեան էֆ. չըբաւ ասանկ խօսք մը, ին-
չո՞ւ իր չը գրուցած խօսքը ատենագրութեան
մէջ անցուցեր է:

Տ. Յովհաննէս Ք. Մկրեան եւ Ապրօ էֆ.
նոյնպէս կը բողոքեն նոյն ատենագրութեան
յիշեալ պարբերութեանց դէմ:

Երեսուցեան էֆ. կ'առաջարկէ որ ատանց
ժամանակ վատնելու նոյն ատենագրութեան
սրբագրվի ու վերատիւն տպագրվիլը քրէտի
զրկի:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ. — (Այն փոքրէն քաշ) կը
հարցնեմ Գիւանին թէ ո՞ր նիստին ատենագրու-
թիւնն է ընդունելութեան գրվածը:

ԱՏԵՆԱԳՐԵՏ ԷՅ. — Գսան եւ մէկերորդ նիս-
տին ատենագրութիւնն է:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ. — Իմ ձեռքս գտնված ատենագ-
րութիւնը ԻԱ նիստինը չէ, ասոր վրայ բացում 1871
տարւոյ եւ նիստ Ա. գրված է. տուէ՛ք ինձ ԻԱ.
նիստի ատենագրութիւնը որ դիտողութիւններս
ընեմ: Իսկ եթէ սխալմամբ այսպէս եղած է,
այնպիսի սխալմունք մ'է այս որ չը կրնար ըն-
դունվիլ, ես կ'առաջարկեմ որ ԻԱ նիստի ատե-
նագրութիւնը տպագրվի ու մեզի դայ:

Սոյն առաջարկութեան կը ձայնակցի Ատե-
նագրեալ էֆ. իրրեւ երեսփոխան, նոյնպէս Ապ-
րօ, Երեսուցեան եւ Պէկեան էֆ. նստինները:
Վերջինը կը հարցնէ նաեւ թէ ասոր սխալնե-
րը ո՞վ պիտի սրբագրէ:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՅ. — Ատենին մէջ չ'ե-
ղած խօսք մը ատենագրութեան մէջ ներկի
չ'է անցընել. այս մասին Երեսուցեան էֆ. ի
տրված բացատրութեանցը կը համաձայնիմ,
բայց նա իր բողոքը չ'ուղղեց հոն ուր որ անկ էր-
այս բողոքը Գիւանին պէտք է ուղղել եւ ոչ
Երեսուցեան էֆ. ի մենք ոչ թէ ըզնուօրինեան էֆ.

այլ նոյն իսկ Գիւանը կը ծանշանք պա-
տասխանատու ժողովին ատենագրութեանց:
Իսկ գալով այն առաջարկութեան զոր ոմանք
կընեն ատենագրութիւնը վերստին տարվելու
համար, չ'եմ հասկընար թէ ի՞նչ ըսել կ'ուզեն.
եթէ հինը անհետել է միտքերնին, ատիկայ
աղէկ սովորութիւն մը չ'ընծայեր. երբ դիտո-
ղութիւններ կ'ըլլան ատենագրութեան մը վը-
րայ, ըսել է անոր սխալները կ'ուղղվին, իսկ
նոյն սխալ ատենագրութիւնը դարձեալ պէտք
է մնայ Խնդիրն անձնականի տանելու ո՞չ պէտք
կայ եւ ո՞չ պատշաճութիւն:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ. — Եթէ այդ ատենագրու-
թիւնը սովորական սխալներ միայն ունենար,
կրնայինք պարզապէս մեր դիտողութիւններովն
այն սխալներն ուղղել. բայց կը տեսնէք որ
այնպիսի կէտեր կան զորս լոկ դիտողութեամբ
մը սրբել բաւական չ'է: Ատենագրութեան ճա-
կատը գրված է, Բացում 1871-ին, Չէ՞ր Ա.
1870ի բացումը ո՞վ դոցեց եւ այս բացումը ո՞վ
հնարեց. եթէ ժողովն է բացեր ու դոցեր, ը-
սելիք չը մնար. բայց դիտենք որ ժողովն այդ-
պիսի որոշում մը չ'է ըրած, իսկ Ատենագրութիւն
ի՞նչպէս կրնան կամ կը համարձակին ինքնին
բանալ կամ գոցել: Այս պատասխանատու-
թիւնը Գիւանին վրայ կը ծանրանայ եւ մասնա-
ւորապէս Ա. Ատենագրար էֆ. ին, որ եթէ այսօր
հոս ներկայ չ'է, Բ. Ատենագրար էֆ. ներկայ է,
պէտք է անոր համար պատասխանէ:

Ատենագրեալ էֆ. իր երեսփոխան խօսիլ կ'ու-
ղէ այս խնդրոյն վրայ:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ ԷՅ. կը դիտէ թէ պէտք է յայն-
ժամ ատենագրութեան աթոռէն իջնել:

Ատենագրեալ էֆ. երեսփոխանաց կարգն անց-
նելու կը պատրաստվի:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ ԷՅ. կ'ըսէ թէ նախ մէկը պէտք
է նշանակել որ նոյն մըջոցին ատենագրեալ ա-
նոր տեղ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ. — Ատենագրեալ էֆ. կար-
ծեմ ձեր խօսելուն հարկ չը կայ, գիտեմ ար-
դէն որ այս պարագային մէջ մեզի համափա-
էք, մեր ըսածները պիտի կրկնէք. ուստի կ'ա-
զաչեմ որ խօսքը Ատենագրար էֆ. ին տաք
մեզի պատասխանելու համար:

ԱՏԵՆԱԳՐԵՏ ԷՅ. (Բ.) — Վերջընթեր Ի. նիստի
ատենագրութեան տակ ծանօթութիւն մը դըր-
ված էր, որ յաջորդ նիստին նոր բացում հը-
րատարակվիլը եւ անոր պատճառը կը յայտնելը:

այդ ծանօթութիւնն ըստ ինքեան պատասխանն
է Փափագրեան էֆ. ինչարցմանց: Իսկ երբ ակտար-
կութիւնները մասնաւորապէս Ա. Ատենագրար
էֆ. ին կ'ուղղվին եւ այս մասք Բ. Ատենագրար-
ընէ բացատրութիւններ կ'ուղղին, ես իրրեւ
Բ. Ատենագրար փոխանակ պատասխանելու դի-
տել կու տամ թէ՛ իմ պաշտօնս Ա. Ատենագրար
էֆ. ի բացակայութեան անոր դործը տեսնել եւ
ի հարկին ալ անոր օժանդակել է միայն, եւ չ'եմ
կործեր թէ անոր դործոց վրայ հսկողութիւն
ընելու իրաւունք մ'ունեցած ըլլամ. ինչպէս
նաեւ չ'եմ յիշեր թէ այնպիսի պաշտօն մ'ունած
ըլլամ ու անոր պատասխանատու գտնվիմ,
ուստի եւ չ'եմ հասկընար թէ ի՞նչ տեսակ բա-
ցատրութիւն կը խնդրէ Փափագրեան էֆ.:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ. — Իմ նպատակս է դիտ-
նալ թէ Գիւանը բովանդակապէս պատասխա-
նատու է այս խնդրոյն, եթէ միայն Ա. Ատե-
նագրար էֆ. ին վրայ կը թողու պատասխանա-
տուութիւնը: Նախորդ նիստին Ատենագրեալ էֆ.
ըսաւ թէ ինք չը տեսած տպվեր է Ի. նիստի ա-
տենագրութիւնը:

ԲԻՆՈՒՔՃՈՒՊԱՇԵԱՆ Բ. ԷՅ. — Ատենագրար էֆ. ի
տուած բացատրութեանց նայելով բովան-
դակ Գիւանին վրայ կը ծանրանայ պատասխա-
նատուութիւնը. բայց որովհետեւ նոյն ատենագ-
րութիւնն ստորագրող Ա. Ատենագրեալ եւ Ա.
Ատենագրար էֆ. նստինները ներկայ չ'են այսօր,
պէտք է այս խնդիրը յաջորդ նիստին մնայ, որ-
պէս զի անոնք ալ ներկայ ըլլան եւ բացատ-
րութիւն տան ժողովին այս մասին:

ԱՏԵՆԱԳՐԵՏ ԷՅ. — Եղած խօսքերէն թիւր
հետեւութիւններ կը հանվին եւ ասոր պատճա-
ռը խնդրոյն քօղարկեալ վիճակի մէջ յուղիթին է:
Բացման խնդրոյն կամ այդ մասին եղած փո-
փոխութեան վրայ դիտողութիւն ընող երես-
փոխանք կարծեմ մասնաւորապէս այն կէտին
կ'ակնարկեն թէ՛ երբ ընդհ. ժողովոյ նիստերու
չարտնակութեան մէջ Գիւանը ուղած ատեն
նոր բացում կարենայ հրատարակել, չ'ըլլայ որ
ասկից հետեւի թէ ուղած ատենն ալ բացումը
կարենայ գոցել եւ նիստերը դադարեցնել: Եթէ
այս կարծիքս ուղիղ է, լաւագոյն է որ փոխանակ
ձեւի ու անձի վրայ խօսելու՝ բուն իսկ խնդ-
րոյն քզին պարզեն, որպէս զի անոր կարե-
ւորութիւնն ու արժէքը ճանշենք,

ԵՌԾՈՒՅԵԱՆ Տ. ԷՅ. — Իրաւացի է այն կար-
ծիքը որը Յոսէն էֆ. մէջ բերաւ, թէ ձգենք
անձնականի խնդիրը եւ բուն խնդրոյն դառ-
նանք ստուգելու չ'էի ուղեր Ա. Ատենագրար էֆ. ին

անունը ասլ, բայց տալու պատճառը ինչպէս
որ ըսի, անոր այդ ըրածին Ատենագրեալ էֆ. ին ալ
անպատեհ երեւցած ըլլան էր: Այն մը կը
մնայ որուն Յոսէն էֆ. համափա չ'երեւիր, այն
է ատենագրութեան կրկին տպագրութիւնը.
Ես կ'ըսեմ որ այսօրվան համար ասի բացառու-
թիւն մը ըլլալ հարկաւոր է. վասն զի քանի որ
«բացում 1871 ամին եւ նիստ Ա.» գրված է ատե-
նագրութեան վրայ, ասիկայ սրբագրութեան
անցնիլ դժուարին է, չ'ըսեմ անկարելի. եւ որպէս
զի չ'ըլլայ թէ վստի պայտարինակ ուրիշ տեղի մեծ
սխալմունք մը պատահի: Ասկից զատ ԺՅ. նիս-
տին ցրուելէն ետեւ երբ Թուսինեան էֆ. ի գիտեցի
եւ ըսի իրեն թէ գալիք նիստը Ա. չը կրնար ըլլալ,
թէ ըստ Աստենագրութեան Երեսփոխանական
ժողովոյն տարեկան նիստերը մայիսին կը նորոգ-
վին եւ թէ Վարչութիւնն ալ իր համարատու թիւնը
մայիս Աին պիտի ներկայացնէ, ինքն այս ըսածիս
համոզվեցաւ. բայց դարձեալ իր միտքը դրածը
կատարեր է. ուստի ինձ կը թուի որ այս տեսակ
սխալները միայն սրբագրել աղղեցութիւն պիտի
չ'ընէ, ուստի եւ վերստին տպագրվին աղէկ է:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՅ. — Ատենագրութեան
մէջ պակասութիւն եղած է, այս մասին բա-
ցատրութիւններ տրվեցան մեզ, սակայն Թու-
սինեան էֆ. էն բացատրութիւն չ'առինք, արդ-
եօք պէ՞տք չ'է որ անոր ալ պատասխանին բա-
պասենք եւ լիուլի իմանանք ի՞նքն է միայն
ընողը թէ ոչ խորհրդով եղած բան մ'է:

Երեսուցեան էֆ. ատենագրութեան նորէն
տպվիլը կ'առաջարկէ. կ'երեւայ որ ինչպէս
Հոսովմայ Պապերը գրական հատորներ, մենք
ալ այս ատենագրութիւնը՝ աշխարհիս վրայէն
ջնջելու համար պիտի այրենք, բայց ասով մէ-
ջէն դուրս կ'ընելիք կտորները յաջորդին մէջ
չը պիտի կրնանք դնել, եւ ինչպէս արդէն ը-
սի՛ գէշ օրինակ մը տուած պիտի ըլլանք:

ԻՆԾԻՆԻՃԵԱՆ Կ. ԷՅ. — Գրեթէ նոյն բանն է
որ ես ալ պիտի կրկնեմ. ատենագրութեան
պատասխանատուութիւնը զայն ստորագրողնե-
րուն վրայ է. Երեսուցեան էֆ. յայտնեց
թէ արդէն զԱտենագրեալ էֆ. տեսեր եւ իրմէն
խմայեր է որ այն կտորները իր աւագրութե-
ան վրայում են եղեր. ըսել է թէ Թուսինեան
էֆ. ին վրայ կը ծանրանայ անոնց պատաս-
խանատուութիւնը. այն ալ այսօր ներկայ չ'է,
ուստի արձագանգ տալով Ֆիւրքճիպաչեան էֆ. ի
առաջարկութեանը կը կրկնեմ որ այս խնդիրն
այսօր մնայ եւ յաջորդ նիստին անկէ ալ
բացատրութիւն անըլի:

ՊԵՆԱՆ Թ. ԷՑ. — Ի նիստի ատենագրութեան վերջը ծանօթութիւն մը գնելով Ատենագրութեան ԷՖ. արդէն հասկցընել ուղած էր թէ յաջորդ ատենագրութեան վրայ նիստ Ա. պիտի դնէ, եւ այնպէս ալ ըրաւ քանի որ ժողովին իր լուծութեամբը հաւանութիւն տրվածի պէս երեւցուց զինքը. թէ եւ ֆրիստատուր էՖ. անցեալ անգամ բողոքեց եւ ուշադրութիւն հրաւիրեց այս պարագային վրայ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — (Միջնակէս Էրդոլ) Այո՛, ես բողոքեցի, բայց դուք չը ձայնակցեցաք ինձ եւ բողոքիս կարեւորութիւն չը տուիք, որով այս հետեւանքը ծագեցաւ:

ՊԵՆԱՆ Թ. ԷՑ. — Ձեր բողոքին վրայ Ատենագրութեան ԷՖ. անմիջապէս բացատրութիւն մը տրվաւ, ժողովը լուծութիւն պահելով կ'երեւի որ դո՛ւ եղաւ այն բացատրութենէն. բայց ասով խի չը կրնար արդարանալ Ռուսիան էՖ. ժողովը եթէ ուզէ յաջորդ նիստին իր հետ կը խօսինք ասոր վրայ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՑ. — Մրտի նեղութիւն կ'ըզգամ երբ կը տեսնեմ որ այսպիսի բաներու վերայ երկարօրէն կը խօսվի եւ սակայն միշտ համարութիւն ու անտարբերութիւն ցոյց կուտանք. կը զարմանամ որ Սրբազան Նախագահն ալ երկայնատեւեամբ կը դիտէ այս եղանակները: Ժողովը կրնայ ընդունիլ որ իր նրատեւ տեղը ուրիշ մը զայ ատենը բանայ ու գոցէ. եթէ այժմ անտարբեր մնանք այս բանին՝ որ մը կը պարտաւորինք տուիլ: Մեր պարտքն է արթուն կենալ այսպիսի գործերու մէջ, որ ի սկզբան աննշան կ'երեւին, բայց յետոյ մեծ կարեւորութիւն կրնան ստանալ: Ես կ'ըստատեմ որ ԲԱ. նիստի ատենագրութիւնը զայ եւ այնուհետեւ իմ դիտողութիւններս ընեն. ուստի այս ատենագրութիւնը պէտք է որ վերցվի եւ տեղը ԲԱ. ընկրվի. կը խընդրեմ որ այս խնդիրը քրէի դրվի:

Տ. ԱՄԲԲՈՒՄՈՍ ՎՐԻ. — Կը համաձայնիմ փափազեան էՖ. ի եւ կ'առաջարկեմ որ ջնջվի այդ ատենագրութիւնը, որ իր մէջը ժողովին չըտած ու չը լսած խօսքերը կը պարունակէ, որ կերպ մը խարդախութիւն ունի իր մէջ. ժողովը եթէ զայն ընդունի իր պատուոյն դէմ գործած կ'ըլլայ. կը խնդրեմ որ այս առաջարկութիւնը քրէի դրվի:

ԽՅԱՍՏԱՐԵԱՆ Օ. ԷՑ. — Դիւանը եւ մասնաւորապէս ՂԱտենագրութեան ԷՖ. կ'ամբաստանէք եւ կ'ըսէք թէ ժողովին անցեալ տարվան չըրջանը գոցեր եւ նորէն բացեր է: Սակայն Սահ-

մանագրութեան ՅԱՐ յօդուածը կ'ըսէ. «Ընդհանուր ժողովը կը գումարվի ըստ վարկեր ստվարութեան ամեն երկու տարին անդամ մը պարիլ ամսոյ վերջերը՝ Ազգային Արարութեան երկամսոյ ընթացքին տեղեկագիրը մտիկ ընելու, եւ ելմտական պաշտօնակալաց ձեռօք ժողովուած եւ ծախս եղած գումարներուն ընդհանուր հաշիւները տեսնելու եւ քննելու, եւ այլն. » կրնայ ըլլալ որ Ատենագրութեան ԷՖ. նոյն յօդուածին կոթնելով այդ նոր բացումը նշանակած եւ անով ինքզինքն արդարացնելու փաստ մը գտած ըլլայ. առանց իր ներկայութեանը ինչպէս կրնանք դատել զինքը: Վերջապէս ասի թուականի շարունակութեան խնդիր մ'է, ասոր մէջ իրաւունք եւ այլն փնտռելու հարկ չը կայ:

ՊԵՆԱՆ Թ. ԷՑ. — Այդ բացման կէտը կրնանք անցնիլ առ այժմ եւ Ռուսիան էՖ. ի ներկայութեան խօսիլ իրեն հետ. ո՛ր գիտէ թերեւ ինքզինքն արդարացնէ այս մասին: Ըստ իս ամենէն աւելի անմարտելի կէտը ատենագրութեան վերջին երեսին մէջն է, ուր ամենեւին չ'ըսված ու չը լսված խօսք մը անցեր է. ինչ ըսել է «այսքան չ'ամաչողաց մէջ մէկ ամաչող խիստ չատ է»: չ'ամաչող բառը բոլոր երեսփոխանաց համար դրված է. եթէ ժողովին մէջ ասանկ խօսք մը անցած ըլլար, հարկաւ պիտի բողոքէինք ամենքս ալ, բայց ընաւ ասանկ խօսք մը չ'եղաւ. ամենուս համար նախատինք մ'է այս:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՑ. — Ըսվեցաւ որ ամբաստանեալը ներկայ չ'է, պէտք է ներկայանայ եւ այնպէս զատվի: Ես ո՛չ զոք կ'ամբաստանեմ եւ դատի կը հրաւիրեմ. ամբաստանութիւն եւ դատաստան բառերը ինձ համար նշանակութիւն մը չ'ունին այս տեղ: Ես նպատակ չ'ունիմ այս տեսակ խնդիրներու մէջ մտնել. ես միայն հարցուցի թէ ո՛ր ատենագրութիւնն է ընդունելութեան գրվածը. ըսիք թէ ԲԱ. նիստինն է. բայց ասի ԲԱ. նիստ չը կրեր իր վրայ, ըսել է թէ ես ԲԱ. նիստին ատենագրութիւնը տակաւին ստացած չ'եմ. բերէք զայն որ կարողանամ իմ դիտողութիւններս ընել: Սահմանագրութեան ՅԱՐ յօդուածը յիշվեցաւ, որ կ'ըսէ՝ Ընդհ. ժողովը պարիլի վերջերը կը բացվի եւն. բայց պարիլի մին եղեր է բացում, միթէ պարիլ ամսոյ սկիզբը նոյն ամսոյն վերջը կրնայ համարվիլ. կ'առաջարկեմ որ այս ատենագրութիւնը չ'եղած համարվի եւ նոր ԲԱ. նիստի ատենագրութիւն մը բերվի. այն ատեն հարկ չը մնար ամաչող եւ

չ'ամաչող բաներու եւ ուրիշ որեւէ խնդիրներու մէջ մտնել:

ԻՓԵԻՃԵԱՆ Է. ԷՑ. — Պահ մը առաջ Օգոստէն էՖ. ատենագրութեան սկիզբը տեսնված նոր բացման վրայ խօսելով կ'ըսէ թէ՛ Ատենագրութեան ՅԱՐ յօդուածին կոթնելով, Ատենագրութեան ՅԱՐ յօդուածը ուշադրութեան վրայած կամ մտայնված կէտերը ժողովին մէջ յիշեցնել է, բայց որովհետեւ այսպէս չ'է ըրած եւ իր յիշածը ինքնին միայն կատարեր է առանց ժողովոյն որոշումն ստանալու, չը կրնար արդարանալ. ուստի սմանց առաջարկութեան յարելով կը համարեմ որ այս ատենագրութիւնը չ'եղած համարվի, եւ ԲԱ. նիստի նոր ատենագրութիւն մը բերվի: Ըսել չ'է թէ տեսարկները ջնջվին նիստապէս եւ գրաւաճառաց քով չը դնուին, բաւական է որ ժողովը չ'ընդունի եւ չը վաւերացնէ զայն:

ՔԻՆՐՔՅԱՊԵՏԵԱՆ Բ. ԷՑ. — Պակասութիւն մը կը նշմարենք եւ զայն գործողը առանց ներկայ ըլլալու վճիռ տալ կ'ուզենք. ասի արդարութեան դէմ է. ես կ'առաջարկեմ որ յաջորդ նիստին մնայ այս խնդիրը Ա. Ատենագրութեան, պէտք եղած բացատրութիւններն իրմէ անընդհատ եւ յետոյ որոշում արվի, Այս առաջարկութիւնս քրէի դնել կը խնդրեմ:

ՊԱՍՏԱՋԵԱՆ Ս. ԷՑ. — Քանի որ ամբաստանեալ մը ներկայ չ'է, չը կրնար անոր բացատրութեան վճիռ արվիլ, օրինաց դէմ է այս. պէտք է սպասել անոր ներկայութեան եւ յետոյ լուծում մը տալ այս խնդրոյն, թերեւ ինքզինք կրնայ արդարացնել. ուստի մինչեւ հիմայ խօսվածները բաւական համարելով գոցենք այս խնդիրը, որ երթալով կ'երկարի եւ մեր ժամերը կ'ըսպառէ ընդունայն:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Խօսողներն արդէն բաւական յայտնեցին իրենց կարծիքը. նորէն իսուփածներն ուրիշ բան չ'են՝ բայց եթէ կրկնութիւն առջի ըսվածներուն. կարծեմ ալ ժամանակն է որ խօսքերն ամփոփենք եւ քրէի դրենք:

ԻՓԵԻՃԵԱՆ Կ. ԷՑ. — Այնպիսի վրայ չըկայ օրէնք մը որ դատապարտէ մէկը՝ երբ նա բացակայ է: Ամբաստանութիւն մը կ'ըլլայ, բայց կը տեսնեմ որ դատապարտութիւն է եղածը. առանց ամբաստանելոյն փաստերը լսելու մերժել անոր ըրածը՝ դատապարտութիւն է, Կ'առաջարկեմ որ ետ ձգվի այս խնդիրը եւ Ռու-

սիան էՖ. ի ներկայութեան իրմէ բացատրութիւն ատենելով վճիռ արվի:

ՊԵՆԱՆ Թ. ԷՑ. — Կարծեմ քրէի դնելու հարկ մը չը կայ. թողունք ատենագրութիւնը յաջորդ նիստին քանի որ այսօր չը պիտի կրնայ վաւերացվիլ, որովհետեւ օրէնքի համաձայն չ'են գաներ այժմէն վճիռ տալ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Խօսքերն ամփոփելու համար պէտք է այսօր քրէի դնեմ խնդիրը:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՑ. — Դատապարտութեան խօսքը մէկի զնենք. ես միայն կը հարցնեմ թէ այսօրվան նիստը քանի՞երորդ պիտի համարվի. եթէ որոշվի որ այսօրվան ատենագրութեան վրայ ԲԱ. նիստ պիտի դրվի, ըսել կ'ըլլայ արդէն թէ եղածը չ'եղած պիտի սեպվի, եւ այսպէսով խնդիրը կը գոցվի. չ'է թէ որ զալ անգամ նորէն «բացում» 1871 ամին եւ նիստ Բ.» պիտի նշանակվի, հարկաւ գարձեալ դիտողութիւններ եւ բողոքներ պիտի ըլլան, ես ալ պիտի բողոքեմ: Կ'առաջարկեմ որ նախորդ նիստին ԵՖ. ի Ատենագրութիւնը Մէրեմ-Պուլի էՖ. ին յանձնըվին, եւ իրմէ խնդրվի որ իր հսկողութեան տակ ի նորոյ պատրաստէ անոր ատենագրութիւնը եւ ժողովոյս բերէ:

ԱԼԱՋԱՋԵԱՆ Է. ԷՑ. — Փափազեան էՖ. ի առաջարկութիւնը խիստ աղէկ է. այն ատեն ո՛չ ներկայութեան պէտք կը մնայ եւ ո՛չ ալ դատաստանի:

ԽՅԱՍՏԱՐԵԱՆ Օ. ԷՑ. — Ըստ Փափազեան էՖ. ի եղածը չ'եղած համարիլ կարելի չ'է, այսօրվան ըրած դիտողութիւններն իս ամբողջ արձանագրութեան տակ են. ինչ որ ըրինք ի նշան դատապարտութեան ըրած եղանք, միայն թէ դատապարտել չ'ենք կարող առանց ամբաստանելոյն ներկայութեան. արդ՝ ո՛ր կողմ դատանք եղածը չ'եղած ըսելով դուրս չ'ենք կրնար նետել, ուրեմն ինքզինքն իս չը խաբենք եւ սպասենք որ ամբաստանեալը ներկայանայ եւ ըստ օրինի դատվի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Կ'ըստատեմ որ վիճարանութիւնը համաձայնեցնեն ըզժողովը այս խընդրոյն արվելիք որոշման վրայ, որպէս զի իբր ատենագրութիւն դիտողութիւնս ընէի եւ ժողովը դիտողութեամբ ըմբռներ զայն. բայց որովհետեւ Փափազեան էՖ. նախորդ նիստին ատենագրութեան վերստին խմբագրութիւնը ինձ յանձնել առաջարկեց եւ իմ անունս տուաւ, հարկ կ'ըլլայ ինձ այժմէն ժողովոյն ուշադրութիւնը խնդրել: Խնդրոյն մէջ երկու զանազան կետեր կան,

բացման եւ աւելագրութեանց . աւելագրութեանն կրնան սրբազրովի ի մէջ առնել , եւ այսօրվան ատենագրութեան մէջ անցնելով ոչ եւս պէտք կը մնայ նոր խմբագրութեան եւ վերստին տպագրութեան . մանաւանդ որ եթէ ի նորոյ խմբագրելն ինձ յանձնել ուզիլ , արաձագրութիւն չը պիտի կրնամ ունենալ այնպիսի յանձնարարութիւն մ'ընդունելու , որ ոչ կարեւորութիւն ունի եւ ոչ ալ օգտակարութիւն , Բայց եթէ ժողովն այսչափով չ'ուզէ գոհանալ ու այս խնդիրն ետքի թողու , զայն անպատճառ Ռուսիոնեան էֆ. ի ներկայութեան տարբեր եղանակաւ յուզել ուղղելով , այդ իր իմաստութեանը կը վերաբերի .

Իսկ բացման կէտը նոյն կարգէն չ'է , այս կէտը բնաւին չը կրնար ետքի թողիլ եւ անպատճառ այսօրվէ պէտք է լուծել զայն . եթէ բացման խնդիրն այսօր անորոյ թողիլ , այսօրվան ատենագրութիւնը գալնիստին տպագրելու ներկայացնել անկարելի կ'ըլլայ , առանց գիտնալու թէ քանի՞երորդ նիստ պիտի նշանակիլ , եւ եթէ Ռուսիոնեան էֆ. յաջորդ նիստին արգելք մ'ունենայ ներկայանալու , նմանապէս նոյն նիստին ատենագրութիւնն ալ .

Ուստի եւս կ'առաջարկեմ որ ժողովն այս բացատրութեանս համեմատ որոշէ ու վերջացնէ խնդիրը .

ԵՌՈՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Ես կ'ընդունիմ Մէրեւմ-Վուլի էֆ. ի այս առաջարկութիւնը , թէ որ կրցի զայն լաւ մը հասկնալ . կարծեմ ըսել ուղեց թէ ատենագրութեան մէջ սպրդած սխալներուն համար Ռուսիոնեան էֆ. էն համար պահանջելու բան չը կայ , քանի որ խնդիր մը քրէտարկութեամբ որոշվելէ ետեւ անոր վրայ անուշագրութեամբ գիտողութիւն մ'է ըլլածը . Կերեւի որ Ռուսիոնեան էֆ. յուզվեր է խնդիրն իր կարծեացը գէ՛մ լուծվելուն համար եւ ուշադիր չ'է կրցեր ըլլալ . — Այս կէտը այժմէն որոշել գիւրիլն է եւ իր ներկայութեանն սպասելու հարկ չը կայ : Անուշագրութեամբ սխալմունք մ'է սպրդեր ատենագրութեան մէջ կ'ընենք եւ այն ատենագրութիւնը կը մերժենք , կը վերջացնենք : Այս մասին Ռուսիոնեան էֆ. էն համար չ'ենք պահանջեր , բայց միայն այն կէտին համար թէ մինչդեռ Թ. Նիստի ատենագրութեան վերջը ըսված է որ Ազգային վարչութիւնը մայիս ամսոյ Ա. նիստին պիտի բերէ իր համարատուութիւնը , Ռուսիոնեան էֆ. կ'երկէ ապրիլ Ծին դուռարկած նիստին Ա. նիստ կ'ըսէ .

կը մնայ ժողովին բացման կէտը , որուն համար իր ներկայութեան սպասելու եւ իրմէ բացատրութիւն պահելու պէտք տեսնվեցաւ . ես այս մասին ալ իրմէն պատասխան ուղեցու հարկ չ'եմ տեսներ : Արդ՝ ըսել է ներկա առաջարկութիւն կայ , կամ այս ատենագրութիւնը վերստին Ռ. նիստ անուշագրութեան նագրութիւն մը բերել եւ կամ Ռուսիոնեան էֆ. ի ներկայութեան սպասել : Կատարելով որ քրէտի գրվելով այս երկուքնն մէկը որոշվի ու խնդիրը լիննայ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կերեւի թէ իմ խօսքերս ճշդիւ չ'են հասկցվեր . ջանամ աւելի պարզ եւ ամփոփ կերպով կրկնելու .

Նախ ժողովն որչէ՛ այժմ թէ ո՞ր բացման եւ քանի՞երորդ նիստ կը ճանչէ այսօրվան նիստը , ու այսպէսով բացման խնդիրը վերջանայ : Ես այս մասին Ա. Ատենագրութիւնէն համար պահանջելու իրաւունք մը չ'եմ տեսներ , վասն զի Ռ. նիստին ատենագրութեան վերջը ծանօթութիւն մը դրված էր կանխաւ այս փոփոխութեան վրայ , եւ սպաճառն ալ ցուցված . երեսփոխանք տեսնելու զայն , բայց միայն Քրիստոստոսը էֆ. գիտողութիւն մ'ըրաւ եւ ժողովն Ատենագրութիւնէն արված բացատրութեան վրայ լսեց , առանց հակառակ կամք յայտնելու . արդ ինչ իրաւամբ Ռուսիոնեան էֆ. կամ ատենագրութիւնը պահատաստանատու մնացած ըլլայ ասոր , երբ կանխաւ ծանուցած էր երեսփոխանութեան . իսկ եթէ , ինչպէ՛ս ըսի արդէն , ժողովը կ'ըստափի եւ կատկածելով որ այս փոփոխութիւնը սպառազային մէջ իր բացումը գոցելու համար վեաստիթ օրինակ մ'ըլլայ , զայն մերժել կ'ուզէ այժմէն , բաւական է որ ըսէ թէ այսօրվան նիստը 1870 տարուոյ բացման շարունակութիւնը կը ճանչէ :

Իսկ աւելագրութեանց գալով , անոնց մէկ մասը՝ այսինքն 3137 , երեսին երկրորդ սրահակին մէջ Ռուսիոնեան էֆ. ի առաջին խօսքէն ետքն եկած մասը՝ ատենական կարգէ գուրս եղած խօսքերն են , եւ միւս մասն ալ ժողովոյն որոշման վրայ գիտողութիւն մը ժողովը կրնայ մերժել զանոնք իբրեւ իր արժանապատուութեանը գէ՛մ վիրաւորիչ ակնարկութիւններ , բայց ինչ համար պիտի պահանջէ անոնց վրայ , որք իրենց խըմբագրութեան ձեւէն իսկ ըստ ինքեան կ'երեւին թէ մի միայն զայն դրողին եւ շատ շատ իր համախոհներուն կարծեաց յայտարարութիւնն են , եւ ոչ թէ մեծագոյն մասի կամք , վճիռ , կամ Ընդ. ժողովոյ որոշումն այլապէս ինչ :

ԻՆՅՈՒՆԵԱՆ Կ. ԷՖ. — Քանի որ խնդիրը կը մասնաւորէք Ա. Ատենագրութիւնէն զրոյ , տեսակ մը դատապարտութիւն ըրած կ'ըլլաք . ես կըսեմ թէ փոխանակ մասնաւորելով քննադատութեան մտնելու , բացարձակ կերպով որոշվի որ ատենագրութեան մէջ զուրսէն ծանօթութիւն կամ գիտողութիւններ չը յաւելցվին այսուհետեւ , եւ եղածներն ալ հերքեալ համարվին . ասկէ առաջ ալ ըսած եմ որ ժողովին մէջ չ'որոշված կամ չը խօսված բան մը ատենագրութեան մէջ չը կրնար անցնիլ :

ՊԵՏԵԱՆ Յ. ԷՖ. — Իւթիւճեան էֆ. ի առաջարկութիւնը ապագային համար է , ներկային համար մէկ քանի կէտեր կան յուզված : Մէրեւմ-Վուլի էֆ. առ կախ թողուլ կ'առաջարկէ , այդ անհնարին է : Ատենագրութեան մէջ եղած սխալ կամ աւելորդ խօսքերուն համար Ռուսիոնեան էֆ. ի ներկայութեան սպասելու ալ հարկ չը կայ , ժողովն ամբողջ կը վկայէ թէ այն խօսքերն եղած չ'են ատենանին մէջ . ուստի կրնանք այսօր վճուել եւ չ'եղած խօսքերն հերքել : Կը մնայ բացում եւ նիստ Ա. ի խնդիրը . այս արդարեւ պէտք է Ա. Ատենագրութիւնէն ներկայութեան թողիլ . եւ իրմէ կ'ըստեմ ծանօթութեան եւ Սահմանագրութեան ՅԱ. րէ յողուածին պիտի կոթնի եւ զանոնք մէջ բերէ , ուստի չ'ենք կրնար այժմէն լուծել այն կէտը եւ ոչ ալ դատապարտութեան քրէտ տալ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Իմ առաջարկութիւնս հիմնովին սխալ հասկըցված է . ես առ կախ թողու մտք խօսք չ'ըրի , ընդհակառակն ատենագրութեան աւելորդ դատված մասերուն համար՝ եթէ ժողովը սրբազրութեամբ գո՛հ չ'ըլլայ , իր իմաստութեանը կը վերաբերի , ըսի , Ռուսիոնեան էֆ. ի ներկայութեան սպասելու իսկ բացման կէտը անպատճառ այսօր լուծելու պէտքն զգացուցի եւ առաջարկեցի հարցնել ժողովին պարզապէս թէ՛ ներկայ նիստը քանի՞երորդ նիստ պիտի ճանչէ , որով բացման խնդրոյն կ'նճիւրդ պարզված կ'ըլլայ :

ԽՕՃԱՍՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Նոր խնդիր մ'է այդ խնդրոց կարգէն գուրս , չը կրնար քրէտի դըրվիլ :

(Զանաւ յայնէ ետէ ինչ ինչ)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այս միջանկեալ խնդրոյն համար քրէտարկութիւն առաջարկողներ եղան , ուստի կը պարտաւորիմ ժողովին կամքը հարցնել եւ իմանալ թէ՛ կուզէ՞՞ այսօր այս խնդիրը լուծել , եթէ յաջորդ նիստին ձգել :

ԽՕՃԱՍՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Նորէն կը կրկնեմ , խնդիրը նոր է մեզի համար քանի որ խնդրոց

կարգին մէջը չ'է . չ'ենք կրնար այսօր քրէտ տալ :

ԱԼԱՃԱՃԵԱՆ Է. ԷՖ. — Նոր համարվելու կարգէ խնդիր մը չ'է այս . մինչեւ անգամ այս մասին ժողովոյն կամքն իմանալու համար քրէտարկութեան ալ պէտք չը կայ :

Տ. ԱՄԲԲՈՍԻՍԱՍ ՎՐԻ. — Նոյնը կը կրկնեմ :

ՍԵՂԱՃԵԱՆ Յ. ԷՖ. — Հոս Ռուսիոնեանին էֆ. չը կայ , հոս տպագրութեան սխալ մը կայ . ԻԱ. նիստ ըսվելուն Ա. նիստ ըսվիր է , այդ սխալը ուղղելով գործը կը լիննայ . ոմանք կ'ըսեն թէ անոր ներկայութեան սպասիլ . բայց մարդը տեսէք ինչ կը գրէ , «այդքան չ'ամաչողաց մէջ մէկ ամաչող խիստ շատ է եւ աւելորդ իսկ» . ասով կը հասկըցնէ թէ ալ այսուհետեւ չը պիտի գայ հոս : Աւրեմն ալ անոր չ'ենք ըսպասել , եւ իր այդ խօսքին համար սեւն իր երեսին կ'ըսենք կ'անցնինք :

Ատենագրութիւնէն քրէտարկութեան գիմել կ'ուզէ որոշելու համար թէ ժողովը քանի՞երորդ պիտի համարիլ ներկայ նիստը :

ԽՕՃԱՍՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Այդ եղանակաւ նոր խնդիր մը կը յարուցանէք . անցեալ նիստը մեզի համար ԻԱ. է , եւ բնականաբար անոր յաջորդ ներկայ նիստն ալ ԻԲ. պիտի ըլլայ : Ո՞վ կայ նախընթաց նիստին ԻԱ. ըլլալը չը ճանչող , ո՞վ խնդիր յարոյց ասոր վրայ որ այսօրվան նիստին քանի՞երորդ համարվելիքը ժողովոյն կը հարցնէք :

ԵՌՈՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Օգտէն էֆ. արամաբանօրէն խօսեցաւ եւ հետեւցուց թէ՛ ըստ որում չը կայ մէկը որ նախընթաց նիստը Ա. նիստ ճանչէ , ըսել է անցեալ նիստին ԻԱ. ըլլալը չ'ընդունող չը կայ , ուրեմն այս նիստն ալ ԻԲ. պիտի ըլլայ : Արդարեւ քանի որ այս կէտին վրայ համաձայն ենք , քրէտի գնելու հարկ չը մնար :

Այս բացատրութեան վրայ Ատենագրութիւնէն ժողովոյն կամքը կը հարցնէ , եւ միաձայն յայտարարութիւն կ'ըլլայ թէ՛ նախընթաց նիստը 1870 տարուոյ բացման շարունակութիւն եւ ԻԱ. նիստ կը ճանչէ ժողովը , ինչպէ՛ս նաեւ ներկայ նիստը՝ ԻԲ :

ԵՌՈՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Կը մնայ հարցնել թէ նախորդ նիստի ատենագրութեան պարտանակութիւնն ալ ընդունված է , թէ չ'է նորէն սպվելու է մի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Քանի որ այս նիստին մէջ

եղած զխոտորութիւնները կ'արձանագրուին, եւ երեսփոխանաց համար ժողովոյն մէջ չ'արտասանված բայց ատենագրութեան մէջ յաւելցած « չ'ամաչօղ » բառը չ'ընդունուիր, ըսել է այս կէտն ալ ներկայ նիստին ատենագրութեան մէջ սրբադրված կ'ըլլայ կը լիննայ :

ԵՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՑ. — Խնդիրը ամաչօղ եւ չ'ամաչօղ բառերու վրայ չ'է, որովհետեւ ես լրսեցի որ Ռուսիոյնեան էֆ. ըսաւ այն խօսքը ժողովին մէջ : Մեզի համար սրբադրելի եւ հերքելի կէտը՝ քրէտարկութենէն ետեւ որոշեալ խնդրոյն վրայ եղած անսպառնաճ ակնարկութիւնն է. կարծեմ այս կէտն ալ ջնջելու մասին համամիտ ենք եւ քրէտի հարկ չը կայ. պէտք է որ մեր այս զխոտորութիւններն ալ անցնին այս օրվան ատենագրութեան մէջ եւ խնդիրը վերջանայ :

ԻՓԷԿՃԵԱՆ Հ. ԷՑ. — Նախորդ նիստի ատենագրութեան բովանդակութեան վրայ կ'ուզեմ երկու խօսքով իմ զխոտորութիւններս ալ յայտնել : — Նախ՝ Ռուսիոյնեան էֆ. իր չըսած մէկ խօսքը իբրեւ ըսած արձանագրեր է. երկրորդ՝ Ընդհ. ժողովոյ պատուոյն դէմ նախատական խօսք ըրեր է. երրորդ՝ առանց ժողովոյ որոշման ժողովը գոցեր բացեր եւ ԻԱ. նիստի ատենագրութիւնը արձգն ըրեր է : Ռուսիոյնեան էֆ. կամ Գիւանին այսպիսի ապօրինաւոր եղանակաւ ինքնիրմէ որոշումներ ընել, ծանօթութիւններ դնել, խնդրոց կարգն անցած խնդիրներ դուրս ձգել եւ նորանոր խնդիրներ յարուցանելը շատ անգամ հարկադրեր են ըզժողովս անոտի վիճարանութիւններով ժամապաճառ ըլլալ : Ժամանակ մը Գիւանը « Գործադիր Յանձնաժողովոյ տեղեկագրին թերութիւնները լրացնելու » խնդիրը առանց ժողովոյ որոշմանը խնդրոց կարգէն դուրս ձգելով ի դուր տեղը քանի մը նիստ վատնել տուաւ մեզ : . . .

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — (Ընդդէմէլ) Ձեր այդ բողոքը անցելոյն կը վերաբերի. ես անցելոյն համար պատասխանատու չ'եմ. կ'աղաչեմ որ խնդրէն չը շեղվի :

ԻՓԷԿՃԵԱՆ Հ. ԷՑ. — (Շարունակէլ) Եթէ այն խնդիրը այդպիսի ապօրինաւոր եղանակաւ խնդրոց կարգէն դուրս ձգված չ'ըլլար, Սահմանագրութեան վերաքննութեան խնդիրն այնչափ երկարացած չ'էր ըլլար : Այսօր ալ անա ամբողջ նիստ մը կորուսինք Գիւանին ապօրինաւոր ատենագրութեանը պատճառաւ. մինչեւ ե՞րբ դատապարտված պիտի ըլլանք այսպիսի անտեղի եւ ապօրինի խնդիրներու վրայ ժա-

մանակ վատնելու : Ժողովս միանգամ ընդ միշտ վերջ դնելու է իր ժամերը վայրապար սպառօղ եւ իր օրինաւոր ընթացքին արդելք եղօղ վրնասակար պատճառներուն, որպէս զի Ազգին կարեւոր եւ կենսական խնդիրներովը զբաղելու կարող ըլլայ :

Այս միջոցին անհամբերութիւն եւ շընկոց վիճարանութեան երկարելուն դէմ. ոմանք դուրս կ'ելնեն, ոմանք վիճարանութեան դադարումը կ'առաջարկեն :

Ատենապետ էֆ. հինգ վայրկեան դադար կուտայ ժողովին, եւ ժամը 9ին վերստին ատենանը կը բացվի :

Նոյն ատեն Գ. Ատենապետ Գարակէօղեան Կ. էֆէնտին ժողովարան մանելով ատենապետութեան աթոռը կ'անցնի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Ի սկզբանէ եղած խօսքերուն ներկայ չ'էի, բայց Ատենագրի էֆ.ին համառօտիւ տուած տեղեկութիւններէն որչափ որ կրցի ըմբռնել, նախորդ ատենագրութեան վրայ եղած ընդհանուր զխոտորութեան կէտերն են, նախ անոր վրայ բացում 1871 ամին եւ նիստ Ա. դրված ըլլալը, եւ երկրորդ անոր մէջ չ'ըսված խօսքեր եւ աւելորդ զխոտորութիւններու անցած ըլլալը. առաջինը իբրեւ տպագրական սխալ մը կ'ընայ ջնջվիլ եւ ուղղվիլ եւ արդէն ուղղվեր է. միւս կէտին գալով ստուգիւ ծանր եւ ցաւալի է որ Ա. Ատենագրի Ռուսիոյնեան էֆ. ինք իր կողմէ այնպիսի աւելորդ խօսքեր յաւելցուցեր է ատենագրութեան մէջ. այս մասին ժողովին մէջ կարծիքները բաժնրված կը տեսնեմ, ուստի պիտի ջանամ կարծիքներն ամփոփել, որպէս զի համաձայնութեամբ կարելի ըլլայ որոշում մը տալ :

ՊԱՌՆԱՍԵԱՆ Պ. ԷՑ. — Ատենագրութեան վերջին երեսին մէջ Ռուսիոյնեան էֆ.ի սա խօսքը՝ « այսքան չ'ամաչօղաց մէջ միմակ մէկ ամաչօղ մը խիստ շատ է », ծանր նախատինք մ'է ժողովին դէմ, որ երբէք չը կրնար ընդունվիլ : Կ'առաջարկեմ որ նոյն ատենագրութիւնը իբր չ'եղած համարվի եւ չ'ընդունվի ժողովին կողմէն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Կարծեմ թէ պահ մը առաջ զուրջվածներուն կրկնութիւնն է ձեր ըսածն ալ. ըսել կ'ուզէք թէ այդ ատենագրութիւնը ետ զրկելի Գիւանին կամ սխալները մէջէն դուրս հանելով նորէն տպագրվի. բայց այս ետ զրկելն ալ աղէկ բան մը չ'է, ասկէց առաջ ալ

վրիպակներ տեղի ունեցած են, եթէ անգամ մը ետ զրկելու գրութիւնն ընդունվի, այն ատեն առջի ատենագրութեանց վրիպակներն ալ ուղղելով նորէն տպագրել հարկ կ'ըլլայ :

Աւստի հոս սեղանին վրայ ամփոփված զխոտորութիւնները աչքէ անցընելէ ետեւ, լաւագոյն եւ կարուկ միջոց կը համարիմ վերջին 313րդ երեսին երկրորդ սիւնակին մէջ դրված երկու աւելորդ մասերը դուրս ձգել եւ այնպէս ատենագրութիւնն ընդունիլ :

Տ. ԵՐԵՄԻԱ ԵՊՍ. — Ատենագրութիւնը ետ զրկելու մասին կէտ մը կայ որ մութը մնաց, կարծեմ առաջարկօղները չը կրցին զայն շօշափել. ատենագրութիւնը ստորագրօղներն են ժողովոյն Ա. Ատենապետ եւ Ա. Ատենագրի էֆէնտիները, եւ իրենք պատասխանատու են անոր. արդ որո՞ւ ետ պիտի դարձնենք զայն վերստին խմբագրելու համար. եթէ իրենց չը դարձնենք՝ զանոնք պաշտօնէ լուծած կ'ըլլանք, իսկ եթէ իրենց դարձնենք՝ ի՞նչ վստահութեամբ պիտի սպասենք որ տարբեր եղանակաւ խմբագրեն եւ դարձեալ իրենց ստորագրութեան տակ մեզի բերեն :

ԻՓԷԿՃԵԱՆ Կ. ԷՑ. — Երեսփա Սրբազանին խօսքը ճշմարիտ է. անոր համար ըսի եւ դարձեալ կըսեմ որ այս խնդիրը լուծելու մէկ հատիկ հնար մը կայ, այն է միանգամ ընդ միշտ որոշել որ ատենագրութեան մէջ ժողովին գործօղութիւններէն դուրս բան մը չ'արձանագրվի, ոչ ալ ծանօթութիւն դրվի. ասիկայ թէ՛ ներկային եւ թէ՛ ապագային համար որոշելու լրմընցնելու է, որով հերքելի կէտերն ալ չ'ընդունված եւ ուղղված կ'ըլլան :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՑ. — Այս նիստին մէջ եղած զխոտորութիւններն ու բողոքները՝ որ գալիք ատենագրութեան մէջ պիտի անցնին հաւկաւ, բաւական համարելու է իբրեւ հերքումն նախորդ ատենագրութեան աւելորդ ցաւալի կէտերուն : Ըստ իս լաւագոյն է նոյն ատենագրութեան նորէն չը տպվին քան թէ տպվիլը : Իսկ այս տեսակ սխալներ վերստին չը պատահելու համար Իւթիւճեան էֆ. ի հետ համամիտ ես ալ կ'առաջարկեմ որ Գիւանին վրայ պարտք դրվի, ինչ որ ժողովին մէջ խօսված է՝ անկէ դուրս բան մը չ'արձանագրել Ատենագրութեան մէջ : Շատոնց այս պակասութեանց առջեւ կ'առնվիլը եթէ ատենական կանոններն հաստատված ըլլային. բոլոր այս պակասութիւններն յիշեալ կանոնագրութեան յապաղման արդիւնքն են :

ՊԵԿԵԱՆ Ք. ԷՑ. — Նախորդ ատենագրութեան մէջէն դուրս ձգվելիքները որո՞նք են՝ դեռ ճշդիւ չ'որոշվեցան. ես այն պարբերութիւնները միայն դուրս նետել կ'առաջարկեմ, որք ժողովին մէջ չ'ըսված խօսքեր են, ինչպէս Ռուսիոյնեան էֆ. ի Տ. Ամբրոսիոս Աարդապետին դէմ իբր պատասխան սա գրածը, « Այսքան չ'ամաչօղաց մէջ միայն մէկ ամաչօղ խիստ շատ է » եւ այլն. այս խօսքն ինք չ'արտասանեց նոյն օրը, միտքէն անգամ անցած ըլլալու չ'էր նոյն միջոցին. եթէ ըսած ըլլար ես իբրեւ երեսփոխան պիտի բողոքէի. ետքը միտքն եկեր ու գրեր է. շատ բաներ ալ կրնան իր միտքէն անցնիլ, բայց ատենագրութեան մէջ չ'են կըրնար դրվիլ :

ԵՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՑ. — Ես լսեցի որ Ռուսիոյնեան էֆ. նոյն խօսքն արտասանեց այն օրը :

ՊԵԿԵԱՆ Ք. ԷՑ. — Եթէ ըսած ըլլար մենք ալ պիտի լսէինք եւ հարկաւ պիտի բողոքէինք նոյն ժամայն յիշեալ խօսքին դէմ, զի ընդհանուր երեսփոխանաց դէմ նախատինք մ'է այն :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՑ. — Ինչպէս որ կըսեն մարդուն մէկը հորը քար մը նետեր է, քառսուն հոգի ժողովրդի ու այն քարը չեն կրցեր հանել. ճիշդ մենք ալ հիմա նոյն վիճակին մէջ կը գտնուվինք. խօսքը կարճ ընելու համար կ'ըսեմ Տ. Ամբրոսիոս Աարդապետի խօսքը պէտք է մնայ, բայց նոյն կարգին մէջ Ռուսիոյնեան էֆ. ի խօսքը՝ զոր չըսաւ, պէտք է վերնայ, նմանապէս եւ այն չորս կէտերը որ իր առջի խօսքին մէջ զրած է ետքէն, զի անոնք ալ յայտնապէս ծանր բառի մը տեղ գործածված են եւ ուրիշ բան չ'են նշանակեր, բայց եթէ թշնամանք ժողովոյն դէմ :

Տ. ԱՄԲՐՈՍԻՈՍ ՎՐԿ. — Խնդիրը զարձեալ երկարիլ սխաւ եւ դեռ չը կրցաւ ամփոփվիլ : Կարծեմ թէ երեսփոխանութիւնը չը պիտի կըրնայ հաճիլ իրեն անպատուութիւն բերող այն ծանր խօսքերը իբրեւ սովորական սխալներ պարզապէս սրբագրելու, այլ պիտի պահանջէ այն անպատու տետրը ջնջել ու անոր տեղ պատուաւոր մը բերել :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Ամենքս ալ խնդրոյն վերջ տալու մտօք որպէս թէ խօսք կ'առնունք եւ բոլորակ գծի մը վրայ դադանալով առաջին տեղը կու գանք : Կը կարծէի թէ պահ մ'առաջ ըրած խօսքերոյս խնդիրը պարզել եւ կարծիքներն ուղղել յաջողեցայ, բայց կը տեսնեմ որ տակաւին իր շփոթ վիճակին մէջ է. Աւելորդ նկատված եւ խնդրոյ նիւթ եղած մասերէն

առջինը ատենական եւ վիճարանական կարգէ դուրս խօսակցութիւն մ'է եւ ատենագրութեան անհրաժեշտ մաս չը կազմեր իբրեւ ատենակի մէջ խօսված խօսք, ինչպէս որ խմբագրութեան ձեւն ալ կը ցուցնէ, ուստի եւ ապարդիւն է այն խօսքերուն ժողովոյ մէջ լսված կամ չը լսված ըլլալուն վրայ վիճարանի երկրորդը ժողովոյ որոշմանը վրայ դիտարկութիւն մ'է, բայց անոր որոշումը չ'աջլատիսնր, երբ ժողովը միահաղոյն, ինչպէս կ'երեւի, չ'ուզեր ընդունիլ զանոնք ատենագրութեան մէջ, բոս ամենայնի բաւական է ըսել որ, ժողովը կը հերքէ երես 343 երկրորդ սիւնակ 32րդ առդ. 8. Ամբոսիտս Արդապետ բառերէն սկսելով մինչեւ 36րդ առդին վերջը, իբր ատենական կարգէ դուրս խօսք. նմանապէս կը հերքէ նոյն սիւնակ 44րդ առդ կէտ 2ը բառերէն սկսելով մինչեւ 47րդ առդին վերջը, իբր ժողովոյ որոշումն արհամարհող դիտարկութիւն:

Ժողովին ասկից աւելի ընելիքը վիճարանութիւնը երկարելէ ուրիշ բան չ'է:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Ատենագրութեան վրայ պահ մ'առաջ եղած ընդհանուր դիտարկութիւններն երկուք էին, մէկը բացում եւ նիստ Ա.ի խնդիրը, եւ միւրը քանի մի աւելորդ խօսքերու խնդիրը. ամենքս ալ համաձայնած կ'երեւինք այս սխալները ջնջելու. մի միայն մէկ խնդիր կայ, այն է Տ. Ամբոսիտս Արդապետի եւ Ռուսինեան էֆ.ի մէջ եղած մէկ քանի խօսքերուն քննադատութիւնը: Դիւանը իր ըստորագրութեամբ աշխարհիս առջեւ կը հրատարակէ թէ նա սա ըսաւ, միւսն ալ սա պատասխանեց. ոմանք կը փաստարանեն թէ ըսված չ'էր այն խօսքը. ճիշդ այնպէս կ'ըմբռնեմ թէ Տ. Ամբոսիտս Արդապետ եւ Ռուսինեան էֆ. Դիւանէն խօսք առած եւ այնպէս խօսած ըլլան, ինձի համար խնդիրը սա է թէ՛ այն խօսքը՝ որ ամենուս անպատուութիւն կը բերէ եւ ամենքս ալ չ'ամաչող կրնէ, կընդունվի՞ մի: Ժողովոյն պարտքն է իր պատիւը պահանջել որմէ որ անկն է, եւ զինքը թշնամանողը դատի հրաւիրել:

ՂԱՋԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Օգտէն էֆ.ի բողոքին ձայնակից եմ. չ'ամաչող չը կայ մեր մէջ. ուստի իմ անձիս համար բողոքելէ զկնի. բոլոր մեծապատիւ պաշտօնակցացս ուղղեալ անարգանք մը ըլլալուն կը բողոքեմ Ռուսինեան էֆ.ի դէմ: Ասիկա անձնական խնդիր մը չ'է, ժողովին պարտքն է պաշտօնական կերպով դատ պահանջել:

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — Օգտէն էֆ.ի բողոքը ետքի թողով, նախ ատենագրութեան պարունակած աւելորդաբանութիւններն ու սխալները վերցնելու մասին կը տեսնեմ որ ժողովը համամիտ է, ուստի պէտք է անդամ մը ասոնք արձանագրովիս: Յետոյ կ'անցնինք Օգտէն էֆ.ի յարուցած խնդրոյն, եւ ժողովին կը հարցնեմ թէ Ռուսինեան էֆ. ի դատ հրաւիրելու առաջարկութիւնը կ'ընդունի՞ մի:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Իմ ըսածս տա՛ է. Ռուսինեան էֆ. նոյն խօսքն ըսեր է թէ չ'է ըսեր, ասոր քննութեանը մասնել աւելորդ է. Դիւանին ստորագրութիւնը կան ատենագրութեան տակը, կրնանք վստահիլ անոնց, եւ չ'ենք կարծեր որ Ատենագրետ էֆ.ի ուշադրութենէ վրիպած ըլլայ այն: Ռուստի նոյն խօսքը իբրեւ աւելորդութիւն չ'ենք կրնար համարիլ եւ դուրս նետելով բաւականանալ:

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — Մինչդեռ շատերը Ռուսինեան էֆ.ի այն խօսքը չ'ըսված եւ աւելորդութիւն համարելով իբրեւ սխալ արձանագրված ըլլալուն համամիտ էին, Օգտէն էֆ. ընդհակառակն աւելորդ չը համարել կ'ուզէ, եւ իբրեւ ընդհանուր ժողովոյ մէջ ըսված խօսք մը դատաքննութեան ենթարկել կ'առաջարկէ:

Տ. ԱՄԲՐՈՍԻՏՍ ԱՐԴ. — Ես ինքս որ այդ խօսքին առարկայ գտնված եմ, կը հաստատեմ թէ ժողովն այն միջոցին քրէտարկութեան զործողութեան դրաղած եւ Դիւանին արձանագրութիւնը դադրած ըլլալով, ինչ խօսք որ իմ եւ Ռուսինեան էֆ.ի մէջ անցաւ մասնաւոր եւ առանձին կրնար համարվիլ, եւ պէտք չ'էր որ ատենագրութեան մէջ անցնէր:

ՊԱՌԱՍԵԱՆ Պ. ԷՖ. — (Արեւմտեան Ռուսինեան) Մինչեւ հիմա լաւ ուշադրութիւն չ'էի ըրեր, ստուգիւ ասի մասնաւոր խօսակցութիւն մ'է Տ. Ամբոսիտս Արդապետի ու Ռուսինեան էֆ.ի մէջ. պաշտօնական վիճարանութեան կարգի չը վերաբերիր եւ ներկայից մեծ մասը չ'է լսած. ինչո՞ւ անցեր է ուրեմն ատենագրութեան մէջ. քանի որ անցեր է, ըսել է թէ Ռուսինեան էֆ. մասնաւոր նպատակ մ'ունի եզեր ժողովը արհամարհելու: Եւ որովհետեւ Ռուսինեան էֆ. իր արձանագրած այն խօսքին հետ իրեն համար — էլ ըսէր — էլ բառերն ալ դրած է, կ'երեւի որ միտք չ'ունի իր պաշտօնը շարունակելու եւ ժողովին ներկայ գտնվելու. ուստի եթէ ժողովը դատաստանի դիմելու ըլլայ, շատ երկար կ'ըլլայ եւ թերեւս խնդիրն ուրիշ ատեններու ներկայանալ հարկ պիտի

ըլլայ. ըստ իս ամենէն կարճ ճամբան սա է, հրաժարեցնել զինքն իր պաշտօնէն եւ Դիւանը վերակազմել. կարծեմ այս ճամբով բաւական դատապարտութիւն մ'ըրած կ'ըլլանք:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Օգտէն էֆ. Ռուսինեան էֆ.ի այն խօսքը ըսված կըմբռնեմ կ'ըսէ, եւ ոչ թէ անոր ըսած ու իր ալ զայն լսած ըլլալը կը հաստատէ ես կ'ըսեմ թէ ընաւ մէկը լսած չ'է այն խօսքը. ուրեմն կը մերժենք եւ իր խօսքն իրեն կը վերադարձնենք, որով թող հասկընայ թէ չ'ամաչողն ինքն է:

ՊԵԿԵԱՆ Թ. ԷՖ. — Տ. Ամբոսիտս Արդապետ կ'ըսէ թէ մասնաւոր եւ առանձին խօսք մ'էր իրենց մէջ եղածը. քանի որ մասնաւոր էր եւ ոչ պաշտօնական եւ մեր մէջէն լսող չ'եղաւ, պէտք է հերքենք. ատենագրութիւնն իսկ կը ցուցնէ թէ այն խօսակցութիւնը մասնաւոր է, որովհետեւ խօսք ուղղելով խօսող երեսօխտանաց կարգէն դուրս եւ առանց գլխադիրներու արձանագրված է այն մասը: Ռուստի ինչ հարկ կայ ասանկ մասնաւոր խօսակցութեան մը համար երեւել դատ բանալու, թերեւս մասնաւոր դիտարկութիւն մը կայ այս առաջարկութեան մէջ ալ զոր Օգտէն էֆ. յառաջ կը բերէ:

ՂԱՋԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Մեր բողոքը այն խօսքին ոչ այնքան ըսվելուն՝ որչափ զրվելուն համար է, եթէ միայն ըսված ըլլար ու գրված չ'ըլլար, թերեւս կ'ընէինք. բայց քանի որ տրպագրութեամբ հրատարակված է այն, Ռուսինեան էֆ. դրաւոր կերպիւ ալ հայհոյած է ժողովոյն դէմ. պէտք է մերժենք զայն բողոքովին, որպէս զի ընդունած չ'ըլլանք այն ծանր արհամարհանքը:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Կը դարմանամ թէ Պէկեան էֆ. ինչո՞ւ կը փախչի դատ պահանջելէ եւ անոր մէջ գաղտնի դիտարկութիւն նըրմարել կ'ուզէ. ես ըսել չ'ուզեցի թէ դատվելով սա կամ նա կերպով պատիւ կամ հատուցում պահանջենք, բայց ինչու անձնական հանգամանքը խնդրոյն հանգամանքին հետ շփոթել կ'ուզէք. հայհոյանքն ուրիշ խնդիր է, ամաչող եւ չ'ամաչող ըսելիս ուրիշ է:

Տ. ՅՈՎ. ՀԱՆՆԷՍ ՔԷ. ՄԿՐԵԱՆ. — Վիճարանութիւնն երթալով կ'երկարի եւ խնդրոյն լուծումը կը դժուարանայ, որուն այսչափ երկարելուն պէտք մը չը կայ: Ռուսինեան էֆ. ժողովոյն անարգանք մը ըրեր է, ժողովը զայն չ'ընդունիր եւ իրեն կը վերադարձնէ: Ասկէ առաջ ըսվեցաւ որ կամ կրկին տպագրվի այն

ատենագրութիւնը եւ կամ գալիք ատենագրութեան մէջ սրբազրվի. այս երկու առաջարկութիւնները քրէտի դնել եւ վերջացնել պէտք է:

ԵՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՖ. — Այս վիճարանութիւնն երթալով երկարեցաւ. բայց եղած դիտարկութիւններն զմեզ բաւական լուսաւորեցին, պէտք է օգուտ քաղել ասկէ: Վիճարանութիւնն այն կէտին հասած է որ եղած առաջարկութիւնները քրէտի պիտի դրվին. առաջարկութեան մէջ կը նախորդ ատենագրութեան վերստին տպագրվին է. բայց պէտք է նկատել որ եթէ վերստին տպագրութեան առաջարկութիւնն ընդունվի, այսօրվան նիստը տեղի ունեցած չը պիտի ըլլայ, վասն զի այն որոշումով այսօրվան վիճարանութիւնները պիտի ջնջվին, անոնց արձանագրութեան տակ մասնաւոր տեղի չը պիտի մնայ եւ այսօրվան գումարումնիս ընաւ չ'եղածի պէս պիտի համարվի: Անարգութիւն մ'եղած է մեզի պատմութեան առջեւ, բայց աւելի մեծ անարգութիւն մը կ'ըլլայ մեզի այս բանս ընել. ապագային համար մեծ խրատներ են ասոնք: Ռուսինեան էֆ. իր բռածին համար հատուցում պահանջելու գալով նախընթաց նիստին ատենագրութիւնը կը սրբազրենք ներկայ նիստին մէջ եւ այսօրվան ատենագրութիւնը ընդգէմ նախորդին ձեռքերնիս ունենալով մեծ հատուցում մը ստացած կ'ըլլանք. որով այլ եւս աւելորդ կը համարիմ զինքը հրաւիրել եւ հատուցում պահանջել. ասկէ աւելի մեծ հատուցում չը կրնար ըլլալ որ իր բռած նախատինքը իրեն ետ կը դարձնենք. մենք վրէժ պահանջելու համար չ'ենք նստած հոս. ուստի ալ վերջ տալով այս խնդրոյն, անցնինք խնդրոց կարգին:

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — Եոսուֆեան էֆ. խիստ լաւ պարզաբանեց, իւր խօսքերուն ողին իմացաք, որով կ'ուզէ անմիջապէս քրէտարկութիւն ընել եւ խնդրոց կարգին անցնիլ: Բայց կը խնդրեմ Եոսուֆեան էֆ.էն որ բարեհաճի ըսել թէ ո՞ր մասերն եւ ինչպէս այսօրվան ատենագրութեան մէջ սրբազրվիլ կ'առաջարկէ:

ԵՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՖ. — Ճիշդ Ատենագրար էֆ.ին քիչ մ'առաջ առաջարկած կերպով: Իացման խնդրոյն համար ամենքս համաձայն ենք, եւ որոշվեցաւ արդէն թէ նիստ Ա. ըսվածը նիստ ԵԱ. կը ձանչենք եւ այսօրվան նիստն ալ ԻԲ. Գալով Տ. Ամբոսիտս Արդապետին խօսքին եւ Ռուսինեան էֆ.ի պատասխանին — որու համար թէ եւ Ռուսինեան էֆ. չ'արտասանեց ըսողներ կան

բայց եւս ընդհին, — ըստ որում վիճարանական կարգի խօսքեր չ'էին, այլ մասնաւոր խօսակցութիւն մը, եւ իբր այն պէտք չ'էին անցնիլ ատենագրութեան մէջ, ուստի մերժենք զայն:

Ժողովոյ որոշման վրայ եղած դիտողութիւնն ալ թշնամանք մ'է ժողովին դէմ, եւ Ռուսինեան էֆ. իրաւունք չ'ունէր ատենագրութեան մէջ դնելու, ուստի զայն ալ մերժենք:

Միանգամայն կ'առաջարկեմ ազգարարել Գիււանին, որ այսուհետեւ որ եւ է այնպիսի ծանօթութիւն եւ դիտողութիւն չը յաւելցնէ իր կողմէն ատենագրութեան մէջ:

Այս բացատրութեանց վրայ Ատենագրութեան Եֆ. քրէարկութեան դիմեց եւ մէկ քրէէի դէմ ընդհանուր հաւանութեամբ հերքելեցաւ ատենագրութեան 343րդ. երեսի երկրորդ սիւնակի 32րդ. տողէն սկսեալ Տ. Արթուրոսի Աւարդապետի եւ Ռուսինեան էֆ. ի խօսքերը, նմանապէս եւ 44րդ. տողին կէտք բառերէն սկսեալ մինչեւ նոյն պարբերութեան վերջը. եւ որոշվեցաւ որ այսուհետեւ Գիււանը ժողովոյ որոշմանց եւ ատենանի մէջ նկատողութեան չ'առնված կէտերու վրայ ծանօթութիւններ եւ դիտողութիւններ չը յաւելու ատենագրութեանց մէջ:

2. ԱՏԵՆԱԳՐՈՒ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՏԵՆԱԳՐԵՏ ԷՖ. — Այս առթիւ ներում պիտի խնդրեմ ժողովէն իբրեւ Գիււանին անդամներէն մէկը՝ պակասութեան մը համար, որուն մէջ գտնված եմ: Երբ ժողովը Գ. Ատենագրութեան մը ընտրելու հարկ տեսաւ եւ զիս պատուելու զեց իւր վստահութեամբը, յայտնեցի թէ ուրբաթ օրերը անկարելի է ինձ շարունակ ներկայ գտնուիլ թղթատարի պատճառաւ նոյն օրերու շաբաղանց զբաղմանցս համար. ինչպէս որ շատ քիչ անգամ կրցիք տեսնել զիս այս ատենանին մէջ: Այս պարագային առջեւ ստիպված եմ խնդրել ժողովէն որ իմ տեղս ուրիշ Գ. Ատենագրութեան մը ընտրէ, որովհետեւ քանի որ ամեն ուրբաթ չը պիտի կրնամ ներկայ գտնուիլ, խիղճս անհանգիստ է այս մասին: Գալով ատենական կանոնաց խնդրոյն, որուն պէտքը խիստ զգալի եղած է արդէն, Օսեան էֆ. խոստացած էր զայն խմբագրելու եւ եթէ այսօր ներկայ ըլլար՝ կարծեմ հետը պիտի բերէր: Ուստի այս խնդիրն այսօր զանց առնելով, կը խնդրեմ իմ հրաժարականս ընդունիք եւ Գ. Ատենագրութեան

մ'ընտրութեան ձեռնարկէք:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Առաջիկայ մայիսին մէջ Ընդհանուր ժողովն իր տարեկան նոր չըրջանը կ'ընկալի, բնականաբար իւր Գիււանն ալ պիտի նորոգվի, եւ արդէն Վարչութիւնն ալ իւր համարատուութիւնը պիտի տայ Սահմանագրութեան տրամադրութեանը համաձայն. հետեւապէս հիմա հարկ չը կայ Ձեր հրաժարականն ընդունել եւ ընտրութեան ձեռնարկելու: Քայց Ատենական կանոնաց խնդրոյն գալով ինչպէս որ խոստացեր էիք Օսեան էֆ. ին միջնորդել եւ ծրագիրն օր առաջ բերել տալ, կը խնդրենք Ձեր խոստման համեմատն առաջիկայ նիստին ներկայացնել տաք զայն:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ըօիք որ Ատենական կանոնաց պէտքը աւելի զգալի եղած է արդէն, իրաւունք ունիք. կը տեսնէք որ ատենական կանոնաց չ'ըլլալէն ո՛րչափ պակասութիւններ յառաջ կու գան:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Դուք քանի որ Ձեր հրաժարականին պատճառ կը դնէք ուրբաթ օրերը չը կրնալ ներկայանալիդ, այս պատճառը վերջընելու համար կ'առաջարկեմ որ ժողովը անօրէնութիւն մ'ընէ իր նիստերը ուրբաթէն հինգշաբթիի փոխելու: Մինչեւ հիմա Ք. Գրան պաշտօնեայ երեսփոխանաց դիտողութեան համար ուրբաթ օրերը նիստ ընել որոշած էինք, կարծեմ մեծ անիրաւութիւն գործած կ'ըլլանք միայն այն մասը գործադրելով եւ վաճառականաց պատճառաւ մասին զմեզմ ընելով, որոնց համար դիմելէ անկարելի է ազգային պաշտօն վարել, թղթատարի օրեր: Այսչափ ժամանակ Ք. Գրան պաշտօնեայները գործադրեցինք, քիչ մ'ալ վաճառականաց մասը դո՛ւ ընկեք:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ես կ'առաջարկեմ որ ժողովոյն նիստերը փոխադրուի մէջ մը ուրբաթ եւ մէջ մը հինգշաբթի օրերն ըլլան:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Արդէն ժողովն իր նիստերու օրերուն խնդիրը յուզած լինելեցած է անգամ մը. հիմա նորէն յուզելու համար ստիպողական հարկ մը չ'եմ տեսներ, եւ երկար վիճարանութեան դուռ մը բացվելիքը կը նկատեմ. վասնորոյ կ'առաջարկեմ որ այս խնդիրն առ այժմ մնայ եւ յաջորդ նիստին համար խնդրոյ կարգը պատրաստենք:

ԵՌՆՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Յանուն Քաղաքական ժողովոյ կը խնդրեմ Գիււանէն որ Վարչութեան տարեկան համարատուութիւնը՝ առաջիկայ

խնդրոյ կարգին մէջ անցընել բարեհաճի:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Կը խնդրեմ որ Գիււանն ազգարարութիւն ընէ Քաղաքական ժողովոյ որ Վարչութեան համարատուութեան տեղեկագիրը տպագրութեամբ հաղորդվի կանխաւ երեսփոխանաց:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Կ'երկրորդեմ այդ առաջարկութիւնը:

ԵՌՆՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Կարելի է, կրնայ ըլլալ այդ՝ եթէ պատեհութիւն ունենանք:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Յառաջիկայ խնդրոյ կարգին մէջ անցնիլ պէտք է նաեւ երեսփոխանաց մէկ հինգերորդ մասին վերանորոգման խնդիրը, որուն կարգն եկած է ըստ Սահմանագրութեան:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — 1865ին երեսփոխանական ժողովը վիճակահանութիւնը կատարած է արդէն, եւ ըստ այնմ չորրորդ կարգին վերանորոգումը մը պիտի կատարվի:

ԱՏԵՆԱԳՐՈՒ ԷՖ. — Գիււանն արդէն պատրաստած է յառաջիկայ նիստին խնդրոյ կարգը եւ կրնայ ժողովին ներկայացնել:

ԵՌՆՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Կարծեմ օրինաւորն այն է որ Վարչութեան համարատուութիւնը ամենէն յառաջ անցնի խնդրոյ կարգին մէջ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Պէտք է վերանորոգումը առաջին խնդիր ըլլայ քանի որ վիճակահանութիւնն եղած է արդէն. ուստի կ'առաջարկեմ որ Վարչութեան համարատուութեան առաջ վերանորոգման խնդիրը անցնի, որպէս զի նախորդ տարիներուն պէս այս անգամ ալ ես չը մնայ:

Գիււանը հետեւեալ խնդրոյ կարգը ներկայացուց եւ ժողովը միաձայնութեամբ ընդունեց զայն:


1. Ընդունելութիւն ատենագրութեան նախընթաց ԻՔ. նիստին.
2. Վերանորոգում 1)5 մասին Ընդհ. ժողովոյ.
3. Ատենական կանոնագրութիւն.
4. Տարեկան համարատուութիւն Ազգային Վարչութեան.
5. Վերաքննութիւն Սահմանագրութեան:



ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Գիււանին յիշեցնել պարտք կը համարեմ, որ յառաջիկայ հրաւերին մէջ ԻԳ. նիստ նշանակել չը մոռնայ. այս մեծ եւ կարեւոր խնդիր մ'է, որուն վրայ ամբողջ նիստ մը անցուցինք այսօր վիճարանութեամբ:

ԱՏԵՆԱԳՐՈՒ ԷՖ. — Ատենագրութիւնները նոյն իսկ շարունակ դիւղերը կեցող երեսփոխանաց ձեռքը ժամանակին հասցընելու համար, Գիււանին ըրած բոլոր ջանից հակառակ կը գտնվին այնպիսիք որ գեռ եւս կը գանգատին: Գիււանը կը խնդրէ այն երեսփոխան էֆէնտիներէն որ բարեհաճին Պոլսոյ կամ Ղալաթիոյ կողմը որոշեալ տեղ մը ցուցընել, որպէս զի ուղղակի հոն ձգվի իրենց ատենագրութեան տետրերը ու այլ եւս գանգատանաց տեղի չ'ունենան:

Ատենը վերցաւ ժամ 10ին:

ԱՏԵՆԱԳՐԵՏ	ԱՏԵՆԱԳՐՈՒ
Կ. ԳԱՐԱԿԷՕՋԵԱՆ	Յ. Լ. ՄԷՐԵՒՄ-ԳՈՒԼԻ





ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՄՆՏՈՒԿԻՆ

Կը ծախսի ի Դիւանատան Պատրիարքարանի , եւ կը գտալի
ամեն դրամաւորաց քով եւ Եկեղեցեաց բանկայնէրը :